

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Новое время, 1912 №• փետր. 4, № 12892) •
(Նամակ խմբագրութեան)

,,Новое время“-ի № 12879-ում պ. Մենշիկովը մի յօդուած ունի տպած «Դատաստան հայերի գլխին» վերնազրով, այնաև նա անհիմն կերպով մի կուսակցութեան նպատակն ու ձգտումը վերադրելով մի ամբողջ ազգին՝ պնդում է, որ «հայերը երեք տէ՛րութիւնների մէջ էլ Տաճկաստանում, Պարսկաստանում և Խուսաստանում ընդհանուր անիշխանութեան ամենազլիսաւոր տարբերից մէկն են կազմում, որ նրանք նպատակ ունին ձեռք բերել ազգային անկախութիւն և պետական ազատութիւն»:

Ի՞նչքան մեզ յայտնի է, «գաշնակցութիւն» կուսակցութիւնը, որ 20 տարուց աւելի գոյութիւն ունի, մինչև 1905 թուականը իւր բոյոր ոյժերը լարում էր տաճկահայերի սարսափելի գոյութիւնը մեղմելու, նրանց կեանքի, պատուի և գոյքի պաշտպանութեան համար, իսկ եւրոպայի առաջ նա իւր ժողովրդի շահերի պաշտպանն էր հանդիսանում և պահանջում էր, երբեմն թերևս չմտածուած միջոցներով, որ Բերլինի ժողովում հանդիսաւոր կերպով խոստացուած բարենորոգումները գործադրուեն. բայց եթէ, բացի սրանից, նա ուրիշ անյայտ և ժողովրդի սրտին խորթ նպատակներ էլ ունեցել է, այնուամենայնիւ խոմ չի կարելի ամբողջ հայ ազգը պատասխանատութեան ենթարկել. մի անգամ չէ, որ այս ազգը անձնուիրութեան փառաւոր ապացոյցներ է տուել հարենիքի և թագաւորի համար:

Հայ ազգը չի ձգտել ազգային անկախութեան և պետական ազատութեան վերականգման, որ պ. Մենշիկովը ճգնում է հաստատել:

Հէնց ինքը պ. Մենշիկովն խոստովանում է, որ 40 տարի առաջ հայերի ազգասիրութիւնը պտտաւում էր ազգային եկեղեցու, լուսաւորութեան և ժողովրդի տնտեսական աշխատանքի շուրջը: Բերլինի վեհաժողովում հայերը քրիստոնեայ եւրոպայից պահանջում էին, որ իրանք հնարաւորութիւն ունենան կանոնաւոր մարդավարի պայմանների մէջ ապրելու, ազգութիւնը պահպանելու և կուլտուրական աշխատանքով զրադուելու: Բայց երկար ու ձիգ տարիների ընթացքում, տեսնելով որ քրիստոնեայ տէրութիւնների կողմից խոստացուած բարենորոգումները չեն կատարւում, իրանք էլ անկարեկից հանդիսատես են մնում հին քաղաքակիրթք քրիստոնեայ ժողովրդի չարչարանքների առաջ հայերը ստիպուած եղան Տաճկաստանում դիմելու ինքնապաշտպանութեան և անձամբ կոուելու կեանքի, պատուի և գոյքի ապահովութեան հա-

մար: Շարունակ յարաբերութեան մէջ լինելով Անդրկովկասի եղբայրակիցների հետ, տաճկահայերը նախանձով էին նայում նրանց ապահովուած գրութեանը, որին հասնելը դարձաւ նրանց զլիսաւոր նպատակը: Ինչ վերաբերում է Անդրկովկասի հայերին, նրանք, պ. Մենշիկովի ասելով, վաղուց համարել են Ռուսաս-սաստանը իրեւ ազատիչ հրեշտակ մահմետական լծից. Տաճկաս-տանի դէմ մզած կորիւներում հայերը զգալի օգնութիւն են ցոյց տուել ուսւ զօրքերին և հզօր քրիստոնեայ պետութեան հանդէպ երախտապարտ ժողովուրդը ռուսական արծուի հովանու տակ իրեն նուիրեց խաղաղ կուլտուրական աշխատանքին:

Հայերը չեն երազել անկախ պետութիւն վերակազմել. մի երկրում, որտեղ բազրազան ազգութիւններ են ապրում, մեծ մասամբ մահմետական, անկախ հայկական պետութեան գոյու-թիւնը անհնարին բան կլինէր: Սա բաւական չէ. ռուսահայերը մինչեւ անգամ ինքնավարութիւն չեն ուզել: 1905 թուին գումար-ուած բոլոր հայաբնակ վայրերի ներկայացուցիչների ժողովը մերժեց ինքնավարութեան գաղափարը. այս իմաստով էլ մի խնդրադիր մատուցուեց փոխարքային՝ ստորագրած բոլոր պատ-դամաւորների և մի քանի տասնեակ հազարաւոր նշանաւոր և պատուաւոր հայերի կողմից: Հայկական ժողովից յետոյ Մոսկ-ուայում բացուեց զեմսկի գործիչների ժողովը, այստեղ էլ հայերը ինքնավարութեան դէմ դուրս եկան. վերջապէս 1905 թ. նոյեմ-բերին համառուսական այլազգիների ժողովում հայերը ինքնա-վարութեան հէնց նոյն իսկ գաղափարը մերժեցին: Այս չափա-զանց կարևոր փաստերը յայտնի են պ. Մենշիկովին և նա հէնց ինքը այդ մասին յիշում է 1905 թ. «Խօօօ վրեմյա»— № 10761-ում: Ռուսաստանին տածած աւանդական հաւատոն էր պատճառը, որ 1894—95 թ. կոտորածներից յետոյ տաճկահայերը փախչելով ապաստարան որոնեցին Անդրկովկասի սահմաններում: Նրանք եկան մեզ մօտ ոչ թէ իրեւ ապստամբ խռովարարներ, այլ եկան իրենց կանանց և երեխաների հետ քրիստոնեայ հզօր տէրութեան հովանու տակ խաղաղ ապրելու և աշխատելու: Պ. Մենշիկովը նրանց գաղթականութեանն է վերագրում այն, որ իրը թէ Ան-դրկովկասը իրեւ գաղթավայր կորաւ ռուսների համար և բացի դրանից պետական խաղաղութիւնը վերանորեգեց այս ծայրա-զաւառում: Ասել թէ հայերի գաղթականութեան պատճառով ուսւ գաղթականների համար հողերը կորան, բոլորովին անմտութիւն կլինի, որովհետև գաղթականները տեղաւորուեցան Տաճկաստա-նին հարևան վայրերում՝ մեծ մասամբ Կարսի շրջանում և Երևանի նահանգի մի մասում, ուր նրանք սակայն չստացան ազատ հո-ղարաժիններ. այն ինչ Անդրկովկասի ամենապտղաւէտ մասը, որ վերապահանուած է ուսւ գաղթականների համար՝ Մուլգանի

անապատը ոչ մի հայ գաղթական չհիւրընկալեց։ Իսկ պետական խաղաղութեան խանդարուելը պ. Մենշիկովը բացադրում է նրանով, որ հայերը հաստատուելով նոր հայրենիքում ռուսաց տիրապետութեան տակ, հանդիպեցին թաթարներին, որոնք ոչ միայն մահմեղական են, այլև և արիւնակից և ցեղակից տաճիկներին։ Դէպի վերջիններս տածած ատելութիւնը հայերը դարձրին թաթարների վրայ. այստեղից և առաջ եկաւ պ. Մենշիկովի կարծիքով, այն սուր թշնամութիւնը, որ 1905 թուին սարսափելի կոտորածների պատճառ դարձաւ։ Փոքր ի շատէ Կովկասի գործերով հետաքրքրուող անձի համար պարզ պէտք է լինի, որ հայ—թուրքական ընդհարումները սկսուեցան տաճկահայերի Ռուսաստան գաղթելուց ուղիղ 10 տարի յետոյ և այն էլ այնպիսի նահանգներում և վայրերում, որտեղ ազգարնակութեան մեծագոյն մասը թուրք էր—Բազւում, Գանձակի և մասամբ Երևանի նահանգում։ այս աեղերում նախայարձակները թուրքերն էին։ հայ գաղթականները չկային այդտեղ. իսկ այն վայրերում, որտեղ տեղաւորուեցան հայ գաղթականները՝ Կարսի շրջանում և Երևանի նահանգի հարաւարեւմտեան մասում, հայերի և մահմեղականների մէջ ընդհարումներ տեղի չունեցան, թէպէտ ազգարնակութեան խոշոր մասը սիւննի դաւանութեան պատկանող տաճիկ և քիւրդեն։ Տաճկաստանի իրենց ցեղակիցների նման։ Այս ընդհարումների բորբոքման ընթացքում պ. Մենշիկովը նրանց գործունէութիւնը վերագրում էր տաճիկ գործակալների, որոնք համիսլամական քարոզութեան համար գործում էին Անդրկովկասի մահմեղականների մէջ։ հայերի կոտորածն էլ բացադրուում էր նրանով, որ իրը թէ Տաճկաստանը պատրաստում էր յարձակուել Ռուսաստանի վրայ (Խօօօ վրեմյա, 1905 թ., № 10762. տես յօդուած «Ճագող կիսալուսին» վերնագրով)։ Ընդհարումների սկզբին հայերը յանկարծակիի եկան. անպատրաստ լինելով և մնալով բաղդիկամայականութեանը, նրանք դիմեցին ինքնապաշտպանութեան, որ հէնց ինքը ժողովուրդը կազմակերպեց. երես առ երես կանգնելով սպառնացող վտանգի առաջ։ Եթէ «դաշնակցութիւնը» այնքան ուժեղ էր, որ, ինչպէս պ. Մենշիկովն է հաւատացնում, 100,000-անոց բանակ էր կազմակերպել՝ ամբողջ երկրում տարածուած, այն ժամանակ անհասկանալի է մնում, թէ ինչու նատաճկահայերի կոտորածների ժամանակ օգնութեան չհասաւ նրանց. այսպիսի մի ահարկու ոյժով հեշտութեամբ կարելի էր հաշիւնները մաքրել տաճիկների և քրդերի հետ։

Բոլորովին հիմքից զուրկ է նաև այն առասպելը, իրրե թէ հայ եկեղեցինների եկամուտները գործադրուել են յեղափոխական նպատակների համար։ Այս առասպելը ծագեց հանգուցեալ կառավարչապետ իշխան Գօլիցինի ժամանակ, որ ենթադրում էր,

իրը թէ հայերը ահազին գումարներ են ծախսում սպառագին-ման վրայ, որ ծածկում էր հարուստ եկեղեցական կալուածների եկամուտներով. ինքը ալ. Մենշիկովն էլ պնդում է, որ եկեղեցական կալուածների գրաւումից յետոյ 30 միլիոն գուտ ուկի է տեղափոխուել ծածուկ էջմիածնից լոնդոն:

Աւելի մօտ ծանօթանալով հայ կեանքի հետ, ալ. Մենշիկովը համոզուեց, որ տարածուած լուրերն ու մատուցած զեկուցումները հնարովի են և երևակայութեան արդիւնք:

Քանի որ կովկասի ընդհանուր կուտուրան ցած մակերեւոյթի վրայ է կանգնած, չկան ջրաբաշխական ձեռնարկութիւններ և հաղորդակցութեան համար ճանապարհներ և քանի որ առհասարակ գիւղատնտեսութիւնը ընկած դրութեան մէջ է, վանքապատկան ընդարձակ հողերն ու անտառները մնում են չմշակուած և նրանցից ստացուած եկամուտները հազիւ ծածկում են ամենահամեստ ծախսերը, երբեմն էլ օգուտի փոխարէն վնաս են տալիս. իսկ եթէ մի բան աւելանում է, այն էլ ուղարկուում է էջմիածնի: Վանքերի և ծխական եկեղեցիների արդիւնքներով պահւում են հայոց եկեղեցական դպրոցները: Էջմիածնի վանքի տարեկան եկամուտը 120—140 հազարից չի անցնում. որ ամբողջութեամբ ծախսում է բազմաթիւ միաբանների, վեհարանի և հոգեոր ձեմարանի վրայ: Բոլոր վանքերի և եկեղեցական հաստատութիւնների տարեկան մանրամասն հաշիւնները շարժական և անշարժ կարողութիւնների մասին թեմական ատեանների միջոցով ստուգութեան համար ուղարկուում են էջմիածնի Սինօդ, էջմիածնի վանքի գանձարանը. բոլոր դրամագլուխներն և ելից ու մտից մատեանները Սինօդի անդամների ու պրոկուրորիներկայութեամբ ամեն ամիս ստուգուում են: Էլ ուրեմն եկեղեցական և վանքական որ եկամուտները պէտք է ծախսուէին յեղափոխական նպատակների համար և որտեղից պիտի 30 միլիոն ոռորդի ոսկի հաւաքուէր էջմիածնում: Երբ վանքի գանձարանը կոտրեցին, տէրութիւնը ընդամենը 400,000 ոռորդի պահստի դրամագլուխ. տոկոսարեր թղթեր և թանգարժէք իրեր գտաւ այնտեղ և ուրիշ ոչինչ: Եկեղեցական կալուածները կառավարող կառավարչական պաշտօննեանները մի տարուայ մէջ համոզուեցան. որ կալուածները շատ քիչ եկամուտներ են բերում, իսկ կենդրոնական կառավարութեան համար պարզուեց, որ իշխան Գօլիցինի զեկուցումները մտածածին են:

Շատ կարելի է, որ հայերի մէջ ևս կային առանձին անհամեներ և խմբեր, որոնք համերաշխ էին համառուսական զանազան կուսակցութիւնների հետ, բայց դրա համար վեր կենալ և ամբողջ հայ ազգը մեղադրել անջատողական և յեղափոխական ձգտումների մէջ անհիմն և անարդար վարմունք է:

Թարգմ. Յ. Գր.

Մ. Խանանայ Ղազարեան.